ԱՐԹՈՒՐ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ
Եվրոպական կրթական տարածաշրջանային
ակադեմիայի իրավագիտության ամբիոնի ասպիրանտ

ՈՐՈՇ ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ ՄԱՐԴՈՒ ՕՐԳԱՆՆԵՐՆ ՈՒ ՀՅՈՒՍՎԱԾՔՆԵՐԸ ՇԱՀՈՒՅԹԻ ԱՂԲՅՈՒՐ ԴԱՐՁՆԵԼՈՒ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԱՐԳԵԼՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հոդվածում տարբեր իրավական ակտերի, տեսական աղբյուրների և որոշ պետությունների բարձրագույն դատական մարմինների պրակտիկայի ուսումնասիրության լույսի ներքո ներկայացվել են բժշկության և կենսաբանության ոլորտներում մարդու օրգաններն ու հյուսվածքները շահույթի աղբյուր դարձնելու սահմանադրական արգելքին առնչվող մի շարք արդիական հիմնախնդիրներ: Անդրադարձ է կատարվել նշված ոլորտում պետության պոզիտիվ պարտականություններին:

Իրականացված վերլուծության հիման վրա կատարվել են որոշ տեսական ընդհանրացումներ և ներկայացվել գիտագործնական բնույթի առաջարկություններ:

Հիմնաբառեր- *բժշկություն, կենսաբանություն, մարդու օրգան, հյուսվածք, բջիջ, շահույթ, ֆինանսական հատուցում:*

Իրականացված սահմանադրական վերջին բարեփոխումների արդյունքում ՀՀ Սահմանադրության 25-րդ հոդվածում ամրագրվեց ինչպես ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքը, այնպես էլ որշակի արժեքների պաշտպանության նպատակով այդ իրավունքը սահմանափակելու օրենսդրի լիազորությունը: Միաժամանակ, սահմանադիրը 25-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրեց այն դեպքերը, որոնք որևէ պարագայում տեղի ունենալ չեն կարող, մասնավորապես՝ «Բժշկության և կենսաբանության ոլորտներում ... մարդու օրգաններն ու հյուսվածքները շահույթի աղբյուր դարձնելը, ...»: Նմանատիպ կանոնակարգումներ ամրագրված են բազմաթիվ երկրների սահմանադրություններում և միջազգային փաստաթղթերում: Եվրոպական Միության՝ Հիմնարար իրավունքների խարտիայի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ բժշկության և կենսաբանության ոլորտներում մասնավորապես, հետևյալները պետք է հարգեն՝ մարդու մարմինը և դրա մասերը ֆինանսական եկամտի աղբյուր դարձնելու արգելքը[1]:

Քանի որ գիտական մտքի զարգացումը հնարավորություն է տալիս իրականացնել այնպիսի գործունեություն, ինչպիսին է օրգանների և հյուսվածքների փոխպատվաստումը, նման հնարավորությունն առաջ է բերում նաև այդ օրգանները և հյուսվածքները շահույթի աղբյուր դարձնելու վտանգ: Փոխպատվաստման հիմնական նպատակը պետք է լինի օպտիմալ, առաջնային և երկարատև բժշկական օգնությունը և՛ դոնորի, և՛ հիվանդի առողջությունը պահպանելու համար, իսկ ֆինանսական կամ ցանկացած այլ նյութական օգուտ չպետք է ազդի դոնորի և հիվանդի առողջության և ինքնազգացողության վերաբերյալ որոշում կայացնելու վրա[2]:

Առողջապահության համաշխարհային վեհաժողովը 2010 թվականին հաստատել է մարդու բջիջների, հյուսվածքների և օրգանների փոխպատվաստման՝ Առողջապահության համաշխարհային կազմակերպության ղեկավար սկզբունքները, ինչպես նաև անդամ պետություններին կոչ է արել՝

1. համապատասխան դեպքերում մարդու բջիջների, հյուսվածքների և օրգանների դոնորության և փոխպատվաստման առնչությամբ սեփական օրենսդրությունը և քաղաքականությունը ձևավորելիս և պաշտպանումն ապահովելիս պահպանել մարդու բջիջների, հյուսվածքների և օրգանների փոխպատվաստման ղեկավար սկզբունքները,

2. նպաստել բջիջների, հյուսվածքների և օրգանների անվճար և կամավոր դոնորության համակարգի մշակմանը ու բարձրացնել մահացած և կենդանի դոնորների կողմից բջիջները, հյուսվածքները և օրգանները կամավոր և անվճար տրամադրելու առավելության վերաբերյալ հասարակության տեղեկացվածությունը և ընկալումը, ի տարբերություն առանձին անձանց և հասարակության համար ֆիզիկական, հոգեկան և սոցիալական այն ռիսկերի,

www.journal.lawinstitute.am

որոնք բխում են մարդկային ծագման նյութերի առևտրից և տրասպլանտացիոն տուրիզմից,

3. խոչընդոտել ֆինանսական օգուտներ կամ համարժեք առավելություններ ձեռք բերելու ձգտմանը մարդու մարմնի մասերի վերաբերյալ գործարքներ կնքելու, օրգանների առևտրի և տրանսպլանտացիոն տուրիզմի ժամանակ՝ ներառելով նաև նման դեպքերի մասին տեղեկանալու պարագայում համապատասխան մարմիններին դիմելու համար առողջապահության ոլորտի մասնագետներին խրախուսումը՝ ազգային ներուժին և օրենսդրությանը համապատասխան,

4. նպաստել բջիջների, հյուսվածքների և օրգանների թափանցիկ, արդարացի բաշխման համակարգի ձևավորմանը՝ հիմնված կլինիկական չափորոշիչների և էթիկական նորմերի վրա, ինչպես նաև նպաստել փոխպատվաստման ծառայությունների արդարացի հասանելիությանն ազգային ներուժին համապա-տասխան, որը հիմք է հանդիսանում, որպեսզի հասարակությունն աջակցի կամավոր դոնորությանը,

5. բարձրացնել դոնորության և փոխպատվաստման անվտանգությունը և արդյունավետությունը՝ նպաստելով միջազգային առաջադեմ փորձի կիրառմանը,

6. ուժեղացնել ազգային և բազմազգ մարմինները և/կամ ներուժը, որոնք կապահովեն դոնորության և փոխպատվաստման գործունեության նկատմամբ հսկողությունը, կազմակերպումը և համակարգումը՝ հատուկ ուշադրություն դարձնելով մահացած դոնորների կողմից դոնորության առավելագույն ընդլայմանը և համապատասխան բժշկական ծառայությունների օգնության ու երկարաժամկետ վերահսկողության միջոցով կենդանի դոնորների առողջության և բարեկեցության պաշտպանությանը[3]:

Առողջապահության համաշխարհային կազմակերպության կողմից մշակված՝ Մարդու բջիջների, հյուսվածքների և օրգանների փոխպատվաստման ղեկավար սկզբունքներից 5-րդ սկզբունքի համաձայն՝ կենդանի դոնորի կողմից բջիջների, հյուսվածքների և օրգանների տրամադրումն իրականացվում է բացառապես անհատույց հիմունքներով, առանց որևէ դրամական վճարման կամ դրամական տեսքով որևէ այլ խրախուսման:

Անհրաժեշտ է արգելել փոխպատվաստման նպատակով բջիջներ, հյուսվածքներ կամ օրգաններ գնելը կամ գնելու վերաբերյալ առաջարկը, կամ դրանց վաճառքը կենդանի դոնորի կամ մահացածի մերձավոր ազգականի կողմից: Բջիջներ, հյուսվածքներ կամ օրգաններ վաճառելու կամ գնելու արգելքը չի բացառում ողջամիտ և վերահսկողության ենթակա ծախսերի փոխհատուցումը, որը կատարում է դոնորը՝ ներառյալ եկամտի կորուստը, կամ փոխպատվաստելու նպատակով մարդու բջիջները, հյուսվածքները կամ օրգանները խնամելու, մշակելու, պահպանելու և փոխանցելու հետ կապված ծախսերի վճարումը[4]: Նույն փաստաթղթում տվյալ սկզբունքի մեկնաբանություններում բջիջներ, հյուսվածքներ կամ օրգաններ վաճառելու կամ գնելու արգելքը կապվում է ոչ միայն անհատույց դոնորության գաղափարի աղավաղման հետ, այլ նաև այն մտավախության հետ, որ վերջին հաշվով վճարովիությունը հանգեցնում է մարդկանց առևտրի:

Առողջապահության համաշխարհային կազմակերպության կողմից կազմված գլոբալ բառարանում տրված բնորոշումները կարող են աջակցել ազգային օրենսդրություններին քննարկվող ոլորտն առավել հստակ և որոշակի կանոնակարգելու համար: Նշված բառարանում բջիջները դիտարկվում են որպես ապրող օրգանիզմի՝ փոխպատվաստման ենթակա և գործող (ֆունկցիոնալ) ամենափոքր միավոր[5], իսկ հյուսվածքները՝ մարդու մարմնի՝ բջիջներից կազմված բաղկացուցիչ մասեր[6]:

Օրգանների և հյուսվածքների փոխպատվաստման ցանկացած միջոցառման ժամանակ հատուկ ուշադրություն է դարձվում այդ գործընթացը ոչ իրավաչափ նպատակներին ծառայեցնելու դեմ արդյունավետ պայքար իրականացնելու հարցին: 2008 թվականին օրգանների թրաֆիքինգին նվիրված միջազգային վեհաժողովի մասնակիցների կողմից տրվել է օրգանների առևտրի բնորոշումը, ըստ որի՝ օրգանների առևտուրն սպառնալիքի, ուժի, ծառայողական դիրքի կամ հարկադրանքի այլ ձևեր կիրառելու, հափշտակելու, խարդախության կամ կեղծիքի միջոցով կենդանի կամ մահացած մարդկանց կամ նրանց օրգանների հավաքագրումն է, փոխադրումը և տեղափոխումը, դրանք թաքցնելը և փաստաթղթերը կեղծելը, երրորդ կողմի կողմից վճարի կամ այլ օգուտի փոխանցելը կամ ստանալը, որն իրականացվում է փոխպատվաստման համար հավանական դոնորին վերահսկողության տակ վերցնելու նպատակով[7]: Միաժամանակ, վեհաժողովը կոչ է արել երկրներին օրենսդրությունը մշակել միջազգային չափանիշներին համապատասխան և կիրառել կյանքի ընթացքում և մահվանից հետո դոնորության ու օրգանների փոխպատվաստման կարգավորման համար, որը, մասնավորապես, դրսևորվում է հետևյալում.

1. պետք է կազմակերպվի և ընդունվի դոնորու-

թյան և փոխպատվաստման այնպիսի համակարգ, որը առավելագույն ամբողջականությամբ փոխպատվաստման կարիք ունեցող հիվանդներին կապահովի օրգաններով,

2. դոնորության և փոխպատվաստման պրակտիկան պահանջում է պետական բժշկական կազմակերպությունների կողմից զարգացած վերահսկողության ինստիտուտների առկայություն դրանց պատասխանատվության և տվյալների բաց լինելն ապահովելու նպատակով,

3. վերահսկողության համակարգը ենթադրում է կյանքի ընթացքում և մահվանից հետո դոնորության հաշվառման ազգային ռեգիստրի առկայություն,

4. օրգանների և հյուսվածքների փոխպատվաստման արդյունավետ ծրագրի առանցքային տարրերից են դրա մասին հասարակությանը լուսաբանելը, բժշկական անձնակազմի կրթությունը և վերապատրաստումը, դոնորության և փոխպատվաստման ազգային համակարգի բոլոր մասնակիցների պատասխանատվության, պարտականությունների և հաշվետվողականության հստակ ամրագրումը[8]:

Մարդու իրավունքների և կենսաբժշկության վերաբերյալ կոնվենցիան[9] (այսուհետ՝ Կոնվենցիա) ընդհանուր կանոններ է սահմանում փոխպատվաստման նպատակով կենդանի դոնորից օրգաններ և հյուսվածքներ վերցնելու համար: Մասնավորապես՝ փոխպատվաստման նպատակով կենդանի դոնորից օրգաններ և հյուսվածքներ վերցնելը կարող է տեղի ունենալ բացառապես ռեցիպիենտին բուժելու նպատակով և պայմանով, որ առկա չէ դիակից ստացված պիտանի օրգան կամ հյուսվածք, ինչպես նաև անհնար է համարժեք արդյունավետությամբ այլընտրանքային բուժում իրականացնել:

Դրա համար անհրաժեշտ է ստանալ հստակ արտահայտված և կոնկրետ համաձայնություն, որը կարող է տրվել ինչպես գրավոր ձևով, այնպես էլ համապատասխան պաշտոնական ատյանում (Հոդված 19-րդ): Սակայն, եթե անձն ունակ չէ տալու նման համաձայնություն, ապա արգելվում է այդ անձից որևէ օրգան կամ հյուսվածք վերցնելը: Բացառիկ դեպքերում և օրենսդրությամբ սահմանված կարգով անձից, ով ունակ չէ տալու նման համաձայնություն, վերականգնվող հյուսվածքներ վերցնելը կարող է թույլատրվել հետևյալ պայմանները պահպանելու դեպքում.

1. չկա համատեղելի դոնոր, ով կարող է տալ նման համաձայնություն,

2. ռեցիպիենտը հանդիսանում է դոնորի քույրը կամ եղբայրը,

3. փոխպատվաստումը կոչված է պահպանելու ռեցիպիենտի կյանքը,

4. օրենքին համապատասխան և համապատասխան մարմնի համաձայնությամբ ստացվել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերում նախատեսված կոնկրետ գրավոր թույլտվություն,

5. հավանական դոնորը դեմ չէ վիրահատությանը (Հոդված 20-րդ):

Բացի այդ, արգելվում է մարդու մարմինը կամ դրա մասերը դարձնել ֆինանսական օգուտներ ստանալու աղբյուր (Հոդված 21-րդ):

ՀՀ Սահմանադրական դատարանը, վերլուծելով Կոնվենցիային կից Մարդու օրգանների և հյուսվածքների փոխպատվաստման վերաբերյալ Լրացուցիչ արձանագրության (այսուհետ՝ Արձանագրություն) նորմերը, որոնք կարգավորում են դիակային դոնորից փոխպատվաստման նպատակով օրգաններ և (կամ) հյուսվածքներ վերցնելու հետ կապված հարաբերությունները (16-19-րդ հոդվածներ), արել է հետևյալ եզրահանգումները. «դիակային դոնորից փոխպատվաստման նպատակով օրգաններ և (կամ) հյուսվածքներ վերցնելը կարող է տեղի ունենալ միայն հետևյալ պայմանների առկայության դեպքում.

1) եթե առկա է համաձայնություն (լիազորում), ըստ որի՝ «Մահացած անձի մարմնից օրգաններն ու հյուսվածքները չեն կարող հեռացվել, եթե օրենքով պահանջվող համաձայնությունն ու լիազորությունը չեն ստացվել: Օրգանների և հյուսվածքների հեռացումը չի կարող տեղի ունենալ, եթե մահացած անձն առարկել է դրա դեմ»: Եվ, ինչպես նշված է վերոհիշյալ արձանագրության բացատրական զեկույցում, եթե անձն իր կենդանության օրոք հայտնել է իր ցանկությունը, իր համաձայնությունը փոխպատվաստման նպատակով իր օրգանը (հյուսվածքը) տալու կամ չտալու վերաբերյալ, ապա այդ կամքը պետք է հարգվի,

2) եթե մահացած անձի համաձայնությունը կամ անհամաձայնությունը՝ իր մահից հետո իր մարմնից փոխպատվաստման նպատակով օրգաններ և հյուսվածքներ հեռացնելու վերաբերյալ պարզ չէ, ապա պետությունները պետք է հնարավոր դարձնեն ներպետական օրենսդրությամբ սահմանված ընթացակարգի հիման վրա այդ հարցի լուծումը: Եթե մահացած անձի կամքը բավարար չափով հստակ չէ, ապա օրգանների և հյուսվածքների փոխպատվաստման համար պարտականություն կրողները պետք է փորձեն ստանալ մահացած անձի հարազատների համաձայնությունը: Եթե ազգային օրենսդրությունն այլ բան չի նախա-

տեսում, ապա մահացած անձի հարազատների կողմից տրվող համաձայնությունը պետք է հիմնվի ոչ թե նրանց անձնական նախընտրության, այլ մահացած անձի արտահայտած կամ ենթադրյալ ցանկության վրա»[10]:

Բացի այդ նորմերից, Արձանագրության[11] 6-րդ գլուխը նվիրված է ֆինանսական օգուտ ստանալու արգելքին: 21-րդ հոդվածի համաձայն՝ մարդու մարմինը կամ դրա մասերը չպետք է օգտագործվեն ֆինանսական օգուտ քաղելու կամ համեմատելի առավելություն ստանալու նպատակով:

Նշված դրույթը չի խոչընդոտում այնպիսի վճարներին, որոնք չեն կազմում ֆինանսական օգուտներ կամ համեմատելի առավելություններ, մասնավորապես՝

1. կենդանի դոնորների աշխատավարձերի և այլ օրինական ծախսերի փոխհատուցումը, որոնք կապված են հեռացման կամ բժշկական գործողությունների հետ,

2. փոխպատվաստման հետ կապված օրինական բժշկական կամ դրանց հետ կապված տեխնիկական ծառայությունների համար օրինական վճարումների փոխհատուցումը,

3. կենդանի անձի օրգանների կամ հյուսվածքների հեռացման արդյունքում չնախատեսված վնասների դեպքում փոխհատուցումները:

Ֆինանսական օգուտներ կամ համեմատելի առավելություններ առաջարկելու կամ ստանալու նպատակով օրգանների կամ հյուսվածքների անհրաժեշտության կամ հասանելիության մասին հայտարարելն արգելված է:

Արձանագրության բացատրական զեկույցն անդրադառնում է նշված նորմերի բովանդակությանը: Այսպես, 21-րդ հոդվածի նպատակը մարդու արժանապատվության պաշտպանությունն է: Օրգանները և հյուսվածքները չպետք է գնվեն կամ վաճառվեն կամ որևէ այլ կերպ հանգեցնեն ֆինանսական օգուտների այն անձի համար, ումից վերցվել են: Փոխպատվաստման գործընթացում ընդգրկված երրորդ կողմը, ինչպիսիք են բժշկական անձնակազմը կամ հյուսվածքների բանկը, չեն կարող եկամուտներ ստանալ օրգաններից կամ հյուսվածքներից:

Բացառություն են կազմում հետևյալ դեպքերը, երբ չստացված օգուտները կամ կատարված (կատարվելիք) ծախսերը կարող են փոխհատուցվել.

1. եթե անձը որոշակի օգուտներից է զրկվում փոխպատվաստման պատճառով, խոսքը օրինական ցանկացած եկամուտն է, որն անձը կստանար օրգաններ կամ հյուսվածքներ չտալու դեպքում, և, եթե օրգաններ կամ հյուսվածքներ վերցնելու արդյունքում անձի մոտ որոշակի չնախատեսված բարդություններ են առաջանում, որոնք կանխելու համար անհրաժեշտ են լրացուցիչ ծախսեր ենթադրող գործողություններ իրականացնել, ապա նման ծախսերը ենթակա են փոխհատուցման,

2. բժշկական կամ տեխնիկական ծառայությունների համար արդարացված ծախսերը: Այս ծախսերը փոխպատվաստման գործընթացի հետ ուղղակիորեն կապված ծախսերն են, որոնք ընդգրկում են օրգանների և հյուսվածքների վերականգնման, փոխադրման, նախապատրաստման, պահպանման համար անհրաժեշտ ծախսերը, որոնք կարող են հիմք հանդիսանալ ողջամիտ փոխհատուցման:

Հոդվածի 2-րդ պարագրաֆը հստակ արգելում է ֆինանսական օգուտներ ստանալու նպատակով օրգանների և հյուսվածքների փոխպատվաստման հետ կապված որևէ բանի գովազդը: Սակայն, սա առնչվում է բացառապես Արձանագրությամբ նախատեսված օրգաններին և հյուսվածքներին: Այն չի առնչվում այնպիսի ապրանքների, ինչպիսիք են օրինակ՝ մազերը կամ եղունգները, որոնք հանդիսանում են անպիտան հյուսվածքներ և որոնց վաճառքը չի վիրավորում մարդու արժանապատվությունը[12]:

Արգելվում է նաև օրգանների և հյուսվածքների առևտուրը[13]: Օրգանների կամ հյուսվածքների թրաֆիքինգը նման անօրինական առևտրի և ուղղակիորեն ֆինանսական օգուտներ ստանալու կարևոր օրինակներ են: Օրգանների և հյուսվածքների թրաֆիքինգով զբաղվողները կարող են կիրառել նաև բռնություն կամ բռնության սպառնալիք՝ որպես խթանի հավելյալ կամ այլընտրանքային միջոց: Նման պրակտիկան որոշակի մտահոգության տեղիք է տալիս, որովհետև այն շահագործում է խոցելի մարդկանց և կարող է խաթարել փոխպատվաստման համակարգի նկատմամբ մարդկանց հավատը: Սա չի նշանակում, որ բռնությունը կամ դրա կիրառման սպառնալիքը չեն կարող խախտել Արձանագրությամբ երաշխավորված այլ իրավունքներ և սկզբունքներ նույնպես: Սրա հիման վրա Կողմերը պարտավոր են օրգանների և հյուսվածքների թրաֆիքինգը կամ օրգանների ու հյուսվածքների ձեռնարկատիրական առևտրի փորձերը կանխելու նպատակով համապատասխան սանկցիաներ կիրառել[14]:

ՀՀ օրենսդրությունը որոշակիորեն անդրադառնում է այս հիմնախնդրին: «Մարդուն օրգաններ և (կամ) հյուսվածքներ փոխպատվաստելու մասին» ՀՀ օրենքի[15] 2-րդ հոդվածն ամրագրում է, որ արգելվում է կենդանի կամ դիակային դոնո-

ից վերցված օրգանների և հյուսվածքների առուվաճառքը: ««Մարդուն օրգաններ և (կամ) հյուսվածքներ փոխպատվաստելու մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքով[16] նախատեսվում է 2-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ. «Կենդանի կամ դիակային դոնորից վերցված օրգանները և հյուսվածքները շահույթի աղբյուր դարձնելն արգելվում է: Սույն օրենքի իմաստով շահույթ է համարվում անձամբ կամ միջնորդի միջոցով իր կամ այլ անձի համար դրամ, գույք, գույքի նկատմամբ իրավունք, արժեթղթեր կամ որևէ այլ առավելություն ստանալը կամ պահանջելը կամ ստանալու խոստումը կամ առաջարկն ընդունելը»: Թեև նշված դրույթով ամրագրվում է, որ օրենքի պահանջները խախտողը ենթակա է պատասխանատվության, սակայն նման պատասխանատվություն ՀՀ քրեական օրենսգրքով դեռ ամրագրված չէ: Հաշվի առնելով միջազգային առկա փորձը՝ ՀՀ Սահմանադրական դատարանը գտել է, որ. «Մարդուն օրգաններ և (կամ) հյուսվածքներ փոխպատվաստելու մասին» ՀՀ օրենքի ներկա իրավակարգավորման պայմաններում Հայաստանում նույնպես անձը երաշխավորված հնարավորություն ունի անարգել արտահայտել իր կամքը՝ կապված իր մահից հետո դիակային դոնոր հանդես գալու խնդրի վերաբերյալ, որով երաշխավորվում է ՀՀ Սահմանադրության 3-րդ, 14-րդ, 16-րդ և 17-րդ հոդվածներով նախատեսված նրա իրավունքների ու ազատությունների իրացվելիությունը, իսկ, եթե այդպիսի որոշումը որևէ պատճառով առկա (հստակ) չէ, ապա օրենքի վիճարկվող նորմերն արգելում են դիակի օրգանների, հյուսվածքների փոխպատվաստում՝ առանց նրա հարազատների (ազգականների) համաձայնության, որը նույնպես հետապնդում է սոցիալապես արդարացի նպատակ:

Միաժամանակ, Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ մեր երկրում օրենքով նախատեսված առկա լուծումները և ենթաօրենսդրական իրավակարգավորումները՝ որպես մեկ միասնական համակարգ, թերի են ու ոչ լիարժեք[17]:

Օրգանների և հյուսվածքների փոխպատվաստման հետ կապված որոշակի սկզբունքներ արտացոլված են նաև այլ երկրների բարձրագույն դատական ատյանների իրավական դիրքորոշումներում: Օրինակ՝ Ռուսաստանի Դաշնության Սահմանադրական դատարանը նշել է, որ մարդու օրգաններ և (կամ) հյուսվածքներ փոխպատվաստելը հանդիսանում է քաղաքացու կյանքը փրկելու և առողջությունը վերականգնելու միջոց և կարող է իրականացվել հումանիզմի այն սկզբունքներով, որպիսիք հռչակված են միջազգային հանրության կողմից, պայմանավորված չեն գիտության և հանրության շահերով[18]: Շվեյցարիայի Դաշնային դատարանը գտել է, որ, եթե մահացած անձը չի հստակեցրել իր ցանկությունն օրգանների և հյուսվածքների հեռացման դեմ, ապա նրա մերձավոր ազգականը կարող է առարկել նման գործընթացի դեմ, հետևաբար՝ այդպիսի օրենքը ծառայում է հասարակության շահերին՝ խրախուսում է օրգանների նվիրաբերումը և կանխում ցանկացած չարաշահում: Հաշվի առնելով նշվածը՝ օրենքը կարող է կիրառվել սահմանադրությանը համապատասխան ձևով[19]:

Օրգանների հեռացման նպատակով օրգանների, հյուսվածքների և բջիջների թրաֆիքինգի ու մարդկանց թրաֆիքինգի վերաբերյալ Եվրոպայի Խորհուրդը և Միավորված Ազգերի Կազմակերպությունը համատեղ ուսումնասիրության արդյունքում որոշակի հետևություններ են հանգել, որոնք արտացոլված են այդ հետազոտության համառոտ ամփոփագրում[20]: Համատեղ հետազոտության համար որպես հիմք է ընդունում մարդու մարմինը կամ դրա մասերը ֆինանսական օգուտի աղբյուր դարձնելու արգելքը, որն իրավաբանորեն պարտադիր փաստաթղթում (Կոնվենցիայում) առաջին անգամ ամրագրվել է 1997 թվականին: Այնուհետև, այս սկզբունքը վերահաստատվել է Արձանագրության մեջ: Մարդու մարմինը կամ դրա մասերը ֆինանսական օգուտի աղբյուր դարձնելու արգելքը շատ կարևոր նշանակություն ունի՝ ալտրուիզմի վրա հիմնված ինչպես կենդանի դոնորներից, այնպես էլ դիակային դոնորներից նվիրատվության համակարգը վտանգի չենթարկելու համար, որը պետք է հիմք հանդիսանա օրգանների փոխպատվաստման համակարգի համար: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ օրգանների թրաֆիքինգը գոյություն ունի օրգանների հասանելիության բացակայության պատճառով՝ էական նշանակություն ունի այնպիսի կազմակերպական միջոցների ձեռնարկումը, որոնք կբարձրացնեն փոխ-պատվաստման համար օրգանների հասանելիության աստիճանը: Մարդու մարմինը կամ դրա մասերը ֆինանսական օգուտի աղբյուր դարձնելու արգելքի սկզբունքի ապահովումը պետք է լինի օրգանների փոխպատվաստման հարցում կարևորագույն հիմնախնդիրը: Օրգանների փոխպատվաստմանն առնչվող ցանկացած ազգային օրենսդրությունը պետք է համապատասխանի այս սկզբունքին: Միջազգային մակարդակում շահագրգիռ բոլոր կողմերի մասնակցությամբ պետք է տրվի օրգանների,

հյուսվածքների և բջիջների թրաֆիքինգի բնորոշումը: Ընդգծելով, որ ցանկացած ազգային օրենսդրություն պետք է հիմնվի մարդու մարմինը կամ դրա մասերը ֆինանսական եկամտի աղբյուր դարձնելու արգելքի սկզբունքի վրա՝ որպես նման բնորոշման ելակետ պետք է ընդունվի այն գաղափարը, որ ազգային համակարգից դուրս օրգանների փոխպատվաստման նպատակով օրգանների վերաբերյալ ցանկացած գործարք պետք է դիտարկվի որպես օրգանների թրաֆիքինգ:

Այս ելակետային հիմնախնդրին արդեն իսկ անդրադարձել է ՀՀ Սահմանադրական դատարանը, որն իր ՍԴՈ-913 որոշման[21] եզրափակիչ մասի 1-ին կետում նշել է. «Մարդուն օրգաններ և (կամ) հյուսվածքներ փոխպատվաստելու մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածն այն մասով, որով առնչվում է Հայաստանում չիրականացվող փոխպատվաստման հանգամանքներում դիակային դոնորից օրգաններ և (կամ) հյուսվածքներ վերցնելուն, ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 3-րդ հոդվածի 1-ին մասին և 14-րդ հոդվածին հակասող և անվավեր»:

2003 թվականին Հունաստանի Հանրապետության նախաձեռնությամբ Եվրոպական Միության Խորհրդի կողմից ընդունվել է մարդու օրգանների և հյուսվածքների թրաֆիքինգի կանխարգելման և վերահսկողության մասին շրջանակային որոշում[22], որի 2-րդ հոդվածը թվարկում է մարդու օրգանների թրաֆիքինգին վերաբերող հանցագործությունները:

Մասնավորապես՝ Յուրաքանչյուր Անդամ Պետություն պարտավոր է միջոցներ ձեռնարկել երաշխավորելու, որ հետևյալ գործողությունները լինեն պատժելի.

1. Մարդկանց հավաքագրումը, տեղափոխումը, փոխանցումը, թաքցնելը կամ ստանալը՝ ներառյալ մարդկանց նկատմամբ վերահսկողության փոխանակումը կամ փոխանցումը, եթե՝

ա) ուժ կամ ուժի սպառնալիք է կիրառվել՝ ներառյալ առևանգումը կամ

բ) խաբելու միջոցներ են կիրառվել կամ

գ) իշխանական լիազորությունները կամ խոցելի կարգավիճակը չարաշահվել են այն իրավիճակում, երբ անձը չի ունեցել իրական կամ ողջամիտ հնարավորություն խուսափելու այդ չարաշահումից կամ

դ) վճարումներ են կատարվում կամ օգուտներ են ստանում կամ տալիս այն նպատակով, որպեսզի ստանան այն անձի համաձայնությունը, ով վերահսկողություն ունի այլ անձի նկատմամբ, ում օրգանը կամ հյուսվածքները վերցնելու նպատակ է հետապնդվում:

2. ա) Բռնություն, սպառնալիք կիրառելու կամ խաբելու միջոցով կենդանի դոնորի օրգանը հեռացնելը,

բ) այն դոնորի օրգանի հեռացումը, ով համաձայնել է հետագա վճարման կամ ֆինանսական խրախուսման խոստման դիմաց,

գ) ուղղակիորեն կամ երրորդ անձանց միջոցով դոնորին ֆինանսական խրախուսման վճարումը, առաջարկը կամ խոստումը, որպեսզի ձեռք բերվի դոնորի համաձայնությունը հեռացնել օրգանը,

դ) դոնորի կողմից կամ երրորդ անձի կողմից ֆինանսական խրախուսում պահանջելը կամ ֆինանսական խրախուսում ստանալը, որի դիմաց դոնորը կտա իր համաձայնությունը հեռացնել օրգանը,

ե) ա, բ, գ և դ կետերում նախատեսված գործողություններում որպես միջնորդ հանդես գալը,

զ) առաջարկելու կամ ձեռք բերելու կամ, առավել ընդհանուր, մարդու օրգանների և հյուսվածքների թրաֆիքինգի նպատակով ֆինանսական խրախուսում պահանջելը, ստանալը, առաջարկելը կամ խոստանալը:

3. ա) 1-ին և 2-րդ մասերում նախատեսված գործողությունների միջոցով մարդու օրգաններ գնելը, տիրապետելը, պահպանելը, փոխադրելը, ներկրելը, արտահանելը կամ տիրապետումը փոխանցելը,

բ) բժշկական կամ բուժքույրական անձնակազմի կողմից օրգանի փոխպատվաստմանը մասնակցելը, եթե իմացել են, որ այն իրականացվում է վերոնշյալ գործողությունների միջոցով:

Ալտրուիստական նպատակներով նվիրաբերված արյան օգտագործումը ֆինանսական օգուտներ ստանալու նպատակով, որի համար անձը, ումից արյունը վերցվել է, ուղղակիորեն չի տվել իր համաձայնությունը, կարող է որոշակի խնդիրներ առաջացնել: Արյան օգտագործումը պետք է սահմանափակվի բժշկական հիմնարկի շրջանակներով, որտեղ այն հավաքվել է, և դրա առևտրայնացումը պետք է բացառվի: Այս ռազմավարությունը կարող է առաջարկել և՛ էթիկայի, և՛ կանոնակարգվածության տեսանկյունից արյան օգտագործման ոլորտում առկա տարբեր հիմնախնդիրների հաշտեցման տեսանկյունից: Համաձայնություն նախապես ստանալը կարող է անձին ապահովել անհրաժեշտ տեղեկատվությամբ և լուծել ինչպես արյունն օգտագործելու կամ չօգտագործելու հարցը, այնպես էլ օգտագործման սահմանափակումների հարցը[23]: Սեփականության իրավունքի ճանաչումը դեռ չի նշանակում առևտրայնացման իրավունքի

ճանաչում: Հակառակը, նման չճանաչումը մարմնին և դրա մասերին տալիս է անորոշ իրավական կարգավիճակ՝ դրանով իսկ օգնելով դրանք պաշտպանել անընդունելի առևտրային շահագործումից[24]:

ԵԱՀԿ՝ Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի հատուկ ներկայացուցչի և համակարգողի գրասենյակի կողմից կազմվել է օրգաններ վերցնելու նպատակով մարդկային թրաֆիքինգի վերաբերյալ փաստաթուղթ, որտեղ ներկայացվում են որոշակի առաջարկներ դրա դեմ պայքարն առավել արդյունավետ դարձնելու նպատակով:

Ընդհանուր հետևությունն այն է, որ անձանց լայն շրջանակ պետք է քրեական պատասխանատվության ենթարկվի նման գործունեությամբ զբաղվելու կամ նպաստելու համար: Բացի միջնորդներից, քրեական պատասխանատվության ենթակա պետք է լինեն նաև փոխպատվաստման վիրահատական գործընթացի մեջ ներգրավված բժշկական, բուժքույրական և տեխնիկական անձնակազմերը: Անհրաժեշտ է նաև քրեականացնել բժշկական անձնակազմի գործողությունները, որոնք ներգրավված են այն անձի հետագա բժշկական խնամքի գործընթացին, ով օրգանը ձեռք է բերել արտասահմանում և այդ մասին տեղյակ չի պահել իշխանություններին[25]:

Օրգանների առևտրի միջազգային ցանցեր են ստեղծվում, որի պատճառով ազգային իշխանությունների համար դժվարանում է նման հանցագործությունների դեմ պայքարը: Քանի որ նման ցանցերում մեծ է բժշկական մասնագիտություն ունեցողների դերը, պետք է մեծ ուշադրություն դարձնել նրանց գործունեությանը, թրաֆիքինգի ցանցերին ներգրավելը կանխելու նպատակով անհրաժեշտ է նրանց՝ իրավական և բարոյական պարտականությունների վերաբերյալ տեղեկացնելուն ուղղված միջոցներ ձեռնարկել[26]:

Այսպիսով, իրականացված ուսումնասիրության արդյունքում հանգում ենք հետևյալին.

1. ՀՀ Սահմանադրությունը չի արգելում օրգանների և հյուսվածքների փոխպատվաստումը, այլ միայն մարդու օրգաններն ու հյուսվածքները շահույթի աղբյուր դարձնելը:

2. Անհրաժեշտ է միանալ այս ոլորտը կարգավորող միջազգային փաստաթղթերին, որը հնարավորություն կտա, ճանաչելով այլ երկրներում ընդունված միասնական մոտեցումները, այլ երկրների և միջազգային կազմակերպությունների հետ համագործակցելու ու համատեղ աշխատելու միջոցով պայքարել մարդու օրգաններն ու հյուսվածքները շահույթի աղբյուր դարձնելու ոչ իրավաչափ երևույթի դեմ, քանի որ դրա վտանգավորությունը պայմանավորված է նաև նրանով, որ օրգաններն ու հյուսվածքները շահույթի աղբյուր դարձնելը կրում է միջազգային ցանցային բնույթ:

3. Որպեսզի այս արգելքը գործնականում երաշխավորվի, անհրաժեշտ է լիարժեք կանոնակարգել օրգանների և հյուսվածքների փոխպատվաստման ողջ գործընթացը:

4. Օրենսդրությամբ հստակ սահմանել օրգանների և հյուսվածքների փոխպատվաստման գործընթացի բոլոր մասնակիցների՝ բժշկական, բուժքույրականի և տեխնիկական անձնակազմերի, միջնորդների և այս գործընթացին որևէ կերպ առնչվող անձանց իրավունքները և պարտականությունները:

5. Բոլորի համար ստեղծել հավասար պայմաններ՝ օրգանների և հյուսվածքների փոխպատվաստման գործընթացից օգտվելու համար:

6. Օրենսդրությամբ սահմանել պատասխանատվության միջոցներ, այդ թվում՝ քրեական պատասխանատվության, բոլոր այն ֆիզիկական կամ իրավաբանական անձանց նկատմամբ, որոնք որևէ եղանակով կկազմակերպեն, կնպաստեն օրգաններն ու հյուսվածքները շահույթի աղբյուր դարձնելուն:

7. Որպես օրգաններն ու հյուսվածքները շահույթի աղբյուր դարձնելու դեպքեր չեն կարող դիտարկվել այն փոխհատուցումները, վճարումները, ողջամիտ պարգևները, որոնք կապված են, մի կողմից, փոխպատվաստման արդյունքում անձի ունեցած կորուստների հետ՝ չստացած աշխատավարձը կամ օրինական այլ եկամուտը, որն անձը կստանար որպես դոնոր հանդես չգալու դեպքում, ինչպես նաև օրգաններ կամ հյուսվածքներ վերցնելուց հետո անձի առողջությունը պահպանելուն ուղղված ծախսեր, և, մյուս կողմից, այն ծախսերը, որոնք կապված են օրգանների պահպանման, փոխադրման, դեղորայքի, տեխնիկական սպասարկման ապահովման ծախսերի հետ:

8. Մարդը կարող է իր պատկերացումների, ընկալումների, համոզմունքների, արժեքային համակարգի շրջանակներում հանդես գալ որպես օրգանների ու հյուսվածքների դոնոր: Այսինքն՝ կամավոր և իր հայեցողությամբ օգտվել ֆիզիկական անձեռնմխելիության իրավունքից: Օրգանները և հյուսվածքները շահույթի աղբյուր դարձնելու վտանգը կայանում է նրանում, որ նման հնարավորության առկայության դեպքում մարդը կարող է իր կամքից անկախ կամ իր կամքին հակառակ «դառնալ» օրգանների և/կամ հյուսվածքների դոնոր, ինչը հակասում է կամավորության սկզբունքին,

հետևաբար՝ կարող է հանգեցնել սահմանադրական մի շարք հիմնական իրավունքների՝ կյանքի իրավունքի, ֆիզիկական անձեռնմխելիության իրավունքի, արժանապատվության հարգման իրավունքի, հավասարության իրավունքի խախտումների:

[1] Տե՛ս, Charter of Fundamental Rights of the European Union,http://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=CELEX:12012P/TXT.

[2] Տե՛ս, Participants in the International Summit on Transplant Tourism and Organ Trafficking convened by The Transplantation Society and International Society of Nephrology in Istanbul, Turkey, April 30–May 2, 2008. http://multivu.prnewswire.com/mnr/transplantationsociety/33914/docs/33914-Declaration_of_Istanbul-Lancet.pdf, p 3.

[3] Տե՛ս, Sixty-third world health assembly, Human organ and tissue transplantation, WHA63.22 Agenda item 11.21 21 May 2010, http://apps.who.int/gb/ebwha/pdf_files/WHA63/A63_R22-en.pdf?ua=1, p. 1-2.

[4] Տե՛ս, Who Guiding Principles On Human Cell, Tissue And Organ Transplantation, As endorsed by the sixty-third World Health Assembly in May 2010, in Resolution WHA63.22. http://www.who.int/transplantation/Guiding_PrinciplesTransplantation_WHA63.22en.pdf?ua=1, p 5.

[5] Տե՛ս, Global Glossary of Terms and Definitions on Donation and Transplantation, World Health Organization (WHO), Geneva, November 2009, http://www.who.int/transplantation/activities/en/, Point 9.

[6] Տե՛ս, նույն տեղում, Point 71.

[7] Տե՛ս, Participants in the International Summit on Transplant Tourism and Organ Trafficking convened by The Transplantation Society and International Society of Nephrology in Istanbul, Turkey, April 30–May 2, 2008. http://multivu.prnewswire.com/mnr/transplantationsociety/33914/docs/33914-Declaration_of_Istanbul-Lancet.pdf, p 2.

[8] Տե՛ս, Participants in the International Summit on Transplant Tourism and Organ Trafficking convened by The Transplantation Society and International Society of Nephrology in Istanbul, Turkey, April 30–May 2, 2008. http://multivu.prnewswire.com/mnr/transplantationsociety/33914/docs/33914-Declaration_of_Istanbul-Lancet.pdf, p 3.

[9] Տե՛ս, Конвенция о защите прав и достоинства человека в связи с применением достижений биологии и медицины: Конвенция о правах человека и биомедицине, Овьедо, 4 апреля 1997 года, https://rm.coe.int/168007d004.

[10] Տե՛ս, ՀՀ Սահմանադրական դատարանի 14 սեպտեմբերի 2010 թվականի ՍԴՈ-913 որոշում, հասանելի է ՀՀ Սահմանադրական դատարանի պաշտոնական էլեկտրոնային կայքում հետևյալ հասցեով ՝ http://concourt.am/armenian/decisions/common/2010/pdf/sdv-913.pdf, 6-րդ կետ:

[11] Տե՛ս, Additional Protocol to the Convention on Human Rights and Biomedicine concerning Transplantation of Organs and Tissues of Human Origin, https://rm.coe.int/1680081562.

[12] Տե՛ս, Explanatory Report (ETS 186) to the Additional Protocol to the Convention on Human Rights and Biomedicine concerning Transplantation of Organs and Tissues of Human Origin, https://rm.coe.int/16800d37ac.

[13] Տե՛ս, Additional Protocol to the Convention on Human Rights and Biomedicine concerning Transplantation of Organs and Tissues of Human Origin, https://rm.coe.int/1680081562, Article 22.

[14] Տե՛ս, Explanatory Report (ETS 186) to the Additional Protocol to the Convention on Human Rights and Biomedicine concerning Transplantation of Organs and Tissues of Human Origin, https://rm.coe.int/16800d37ac.

[15] Տե՛ս, «Մարդուն օրգաններ և (կամ) հյուսվածքներ փոխպատվաստելու մասին» ՀՀ օրենք, ընդունված է ՀՀ Ազգային ժողովի կողմից 2002 թվականի ապրիլի 16-ին http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=71622.

[16] Տե՛ս, 2018 թվականի մարտի 2-ին ՀՀ Ազգային ժողովի՝ առաջին ընթերցմամբ ընդունված՝ ««Մարդուն օրգաններ և (կամ) հյուսվածքներ փոխպատվաստելու մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք, http://parliament.am/draft_history.php?id=9613.

[17] Տե՛ս, ՀՀ Սահմանադրական դատարանի 14 սեպտեմբերի 2010 թվականի ՍԴՈ-913 որոշում, հասանելի է ՀՀ Սահմանադրական դատարանի պաշտոնական էլեկտրոնային կայքում հետևյալ հասցեով՝ http://concourt.am/armenian/decisions/common/2010/pdf/sdv-913.pdf, 6-րդ կետ:

[18] Տե՛ս, Определение Конституционного Суда РФ от 4 декабря 2003 г. N 459-О "Об отказе в принятии к рассмотрению запроса Саратовского областного суда о проверке конституционности статьи 8 Закона Российской Федерации "О трансплантации органов и (или) тканей человека", доступно на официальном сайте Конституционного Суда Российской Федерации по электронному адресу http://ksportal.garant.ru:8081/SESSION/PILOT/main.htm.

[19] Տե՛ս, ՀՀ Սահմանադրական դատարանի 14 սեպտեմբերի 2010 թվականի ՍԴՈ-913 որոշում, հասանելի է ՀՀ Սահմանադրական դատարանի պաշտոնական էլեկտրոնային կայքում հետևյալ հասցեով՝ http://concourt.am/armenian/decisions/common/2010/pdf/sdv-913.pdf, 6-րդ կետ:
[20] Տե՛ս, Executive summary of the Joint Council of Europe/United Nations Study on trafficking in organs, tissues and cells and trafficking in human beings for the purpose of the removal of organs, https://rm.coe.int/168070caab.
[21] Տե՛ս, ՀՀ Սահմանադրական դատարանի 14 սեպտեմբերի 2010 թվականի ՍԴՈ-913 որոշում, հասանելի է ՀՀ Սահմանադրական դատարանի պաշտոնական էլեկտրոնային կայքում հետևյալ հասցեով՝ http://concourt.am/armenian/decisions/common/2010/pdf/sdv-913.pdf, 6-րդ կետ:
[22] Տե՛ս, Initiative of the Hellenic Republic with a view to adopting a Council Framework Decision concerning the prevention and control of trafficking in human organs and tissues, (2003/C 100/13), Date of document: 26/04/2003; Official Journal of the European Union http://eur-lex.europa.eu/legal-content/EN/ALL/?uri=CELEX:52003IG0426(02).
[23] Տե՛ս, Carlo Petrini, *Ethical and legal considerations regarding the ownership and commercial use of human biological materials and their derivatives*, Journal of Blood Medicine, 2012; p 3, available at https://www.ncbi.nlm.nih.gov/pmc/articles/PMC3440234/ pp. 87–96:
[24] Տե՛ս, Carlo Petrini, *Is my blood mine? Some comments on the Convention on Human Rights and Biomedicine,* Blood Transfus. 2013 Jul; 11(3), available at https://www.ncbi.nlm.nih.gov/pmc/articles/PMC3729117/, pp. 321–323.
[25] Տե՛ս, OSCE Office of the Special Representative and Co-ordinator for Combating Trafficking in Human Beings, Trafficking in Human Beings for the Purpose of Organ Removal in the OSCE Region: Analysis and Findings, Occasional Paper Series no. 6 (July 2013), http://www.osce.org/secretariat/103393?download=true, p 36.
[26] Տե՛ս, նույն տեղում, p 59.

Գրականություն

1. ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 2010 թվականի սեպտեմբերի 14-ի ՍԴՈ-913 որոշում:
2. «Մարդուն օրգաններ և (կամ) հյուսվածքներ փոխպատվաստելու մասին» 2002 թվականի ապրիլի 16-ի ՀՀ օրենք:
3. «Մարդուն օրգաններ և (կամ) հյուսվածքներ փոխպատվաստելու մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2018 թվականի մարտի 2-ի ՀՀ օրենք:
4. Конвенция о защите прав и достоинства человека в связи с применением достижений биологии и медицины: Конвенция о правах человека и биомедицине, Овьедо, 4 апреля 1997 года.
5. Определение Конституционного Суда РФ от 4 декабря 2003 г. N 459-О “Об отказе в принятии к рассмотрению запроса Саратовского областного суда о проверке конституционности статьи 8 Закона Российской Федерации “О трансплантации органов и (или) тканей человека”.
6. Charter of Fundamental Rights of the European Union.
7. Additional Protocol to the Convention on Human Rights and Biomedicine concerning Transplantation of Organs and Tissues of Human Origin.
8. Explanatory Report (ETS 186) to the Additional Protocol to the Convention on Human Rights and Biomedicine concerning Transplantation of Organs and Tissues of Human Origin.
9. Participants in the International Summit on Transplant Tourism and Organ Trafficking convened by The Transplantation Society and International Society of Nephrology in Istanbul, Turkey, April 30–May 2, 2008.
10. Global Glossary of Terms and Definitions on Donation and Transplantation, World Health Organization (WHO), Geneva, November 2009.
11. Who guiding principles on human cell, tissue and organ transplantation, as endorsed by the sixty-third World Health Assembly in May 2010, in Resolution WHA63.22.
12. OSCE Office of the Special Representative and Co-ordinator for Combating Trafficking in Human Beings, Trafficking in Human Beings for the Purpose of Organ Removal in the OSCE Region: Analysis and Findings, Occasional Paper Series no. 6 (July 2013).
13. Executive summary of the Joint Council of Europe/United Nations Study on trafficking in organs, tissues and cells and trafficking in human beings for the purpose of the removal of organs.
14. Initiative of the Hellenic Republic with a view to adopting a Council Framework Decision concerning the prevention and control of trafficking in human organs and tissues, (2003/C 100/13), Date of document: 26/04/2003; Official Journal of the European Union.
15. Carlo Petrini, Ethical and legal considerations regarding the ownership and commercial use of human biological materials and their derivatives, Journal of Blood Medicine, 2012.
16. Carlo Petrini, Is my blood mine Some comments on the Convention on Human Rights and Biomedicine, Blood Transfusion. 2013 Jul; 11(3).

Артур Наапетян
Аспирант юридической кафедры Европейской
региональной образовательной академии

РЕЗЮМЕ

Некоторые рассмотрения о конституционном запрете в областях медицины и биологии сделать источником выгоды человеческие органы и текстуры.

В статье в свете различных правовых актов, теоретических источников и практики высших судебных органов некоторых государств был представлен ряд актуальных вопросов, касающихся конституционного запрета в областях медицины и биологии сделать источником выгоды человеческие органы и текстуры.

Были затронуты позитивные обязанности государства в этой области.

На основе анализа были сделаны некоторые теоретические обобщения и были представлены научно-исследовательские рекомендации.

Ключевые слова: *медицина, биология, человеческий орган, текстура, клетка, прибыль, финансовая компенсация.*

Artur Nahapetyan
PhD student at the Law Department at
European Regional Educational Academy

SUMMARY

Some considerations on the constitutional prohibition in the fields of medicine and biology to make a source of benefit the human organs and textures

In the article in the light of various legal acts, theoretical sources and the practice of the supreme judicial bodies of some states have been presented a number of topical issues regarding the constitutional prohibition in the fields of medicine and biology to make a source of benefit the human organs and textures.

It was touched upon the positive responsibilities of the state in this area.

Based on the analysis have been made some theoretical generalizations and have been presented scientific-researched recommendations.

Key words: *medicine, biology, human organ, texture, cell, profit, financial compensation.*